

**Ի՞նչ կարգ է սահմանված հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների և նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի տարածքում վերահեռարձակում իրականացնելու համար:**

Հյուրանոցները, հյուրանոցային համալիրները, հանգստյան տները և նմանատիպ վարձակալական հիմունքներով հաստատությունները, որտեղ առկա է ութ կամ ավելի հեռուստացույց, վերահեռարձակում կարող են իրականացնել միայն Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո: Ծանուցման մեջ պետք է նշվեն այն հեռուստածրագրերի անվանումները, որոնք ծանուցում ներկայացնողը պատրաստվում է վերահեռարձակել, ինչպես նաև անհրաժեշտ է ներկայացնել նշված հեռուստածրագրերի իրավատերերի հետ կնքված պայմանագրերի պատճենները: